



№ 19-55

Մեպտեմբերի 5, 2019 թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Պարոն Սուրեն Պապիկյանին

Հարգելի պարոն Պապիկյան,

Ինչպես գիտեք, 2018 թվականի նոյեմբերի 1-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը կոչով դիմել է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ համաներման հիմքով պատժից ազատված անձանց վերաստցիալականացման գործընթացի շարունակականությունն ապահովելու և, ըստ այդմ, կրկնահանցագործության ռիսկերը նվազեցնելու հարցում աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Մեջբերումը արված է ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքից: Կից հղումն է՝ <http://moj.am/article/2196>:

Սույն գրությամբ խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե՛

1. Մինչ օրս համաներումով ազատ արձակված քանի՞ անձ է դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
2. Մինչ օրս համաներումով ազատ արձակված անձանց ուղղությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ի՞նչ աշխատանքներ է իրականացրել և ի՞նչ արդյունքներ է արձանագրել:

Նարե Հովհաննիսյան

ՀԿ նախագահ



Մեպտեմբերի 5, 2019 թ.

